յոս (Նիկոլայ) Քալաշեանցի մօտ աւանդ, որոյ յիշատակագիրն է ըստ այսմ.

«Արդ գրեցաւ տառս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Յովհաննէս արեղայիս. անուամբս միայն և գործովս ոչ, ի դուռն սուրբ Աթոռոյս Յակոբայ վանիցս և ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ի յերկիրս Խաչեն, ի գիւղըս, որ կոչի Խանձք ի Հայրապետութեան Տեառն Գրիգորիսի և Արհ եպիսկոպոսին Առատակէսին, և իշխանաւոր տեղւոյս Մէհրապ պէկին, և աշխարհակալ Զահ Դամանին . . . ի թվիս Հայոց ՌԹ.։

Դ. Քարոզգիրք Կեարմախանու Աղէքսանդր քահանայի մօտ, որոյ յիշատակարանն է այսպէս.

«Յիշատակ է այս Քարոզ գիրքս մեծ Զինացի Տէր Մելիքսէթի որդի Սողոմոն վարդապետին. գրեցաւ առ դրան սրբոյն Ուրեկայ, աշակերտ նորին տիրացու Յովհաննէս, որ է եղբօր որդի։ Ով կարդայ, լիարբերան ողորմի ասէ. թվին ՌՄԼԶ. մայիսի Դ ին»։

Դ. Զարական ձեռաց Սաղիանի վանքումն առանց յիշատակարանի։

Ե. Ժամագիրք առենի գրած ձեռամբ գրիր Եփրեմայ թվ. ՌՃԾԷ։

Զ. Մեկնութիւն Պրոկղի գրոցն, ՌՃՀԵ և միւսն՝ ՌՄԾԲ։

Աղուանից եկեղեցւոյ սկզբնաւորութեան և վերջաւորութեան համառօտ նկարագիրը ընթերցողաց ներկայացնելոյ համար կարեւոր համարեցի արտագրել այս տեղ Մակար Ծ. վարդապետի «Աղուանք և Դրացիք» անունով գրքի մէջ գրած «Քրիստոնէական կրօն» վերնագրով յօդուածը. յերես 82-84։

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆ

« 50) Աղուանից ժողովրդեան ազգային, կրօնական և քա-